









Ներկայ Հայ ազգի համար փափուկ ժամանակը, երբ լուսաւորչական, կաթողիկէ և բողոքական Հայք անխտիր աշխատում են և պէտք է աշխատեն ընդհանրութեան համար, երբ մինչև անգամ իւրաքանչիւր առաջնորդ կաթողիկոսի հետ համահասարակ ճիշդ ոլորտի թափել ընդհանուր ազգի շահերի համար, երբ ամեն Հայ, ամեն ներքին թէ՛ կրօնական և թէ՛ հասարակական երկպառակութիւնից հեռու իւրովստան պէտք է աշխատի ընդհանուր շահերի համար, երբ ամենամեծը իբրև ամենից փոքրը պէտք է աշխատի, երբ իշխանաւորը իբրև ազգի ծառայ պիտի մշակի, սյուսիս ժամանակ կրօնական վէճեր և վարդապետների իրաւասութեան խնդիրներ, յարուցանելով մենք ազգապիտանք համարում, ուստի և ոչ թէ չենք համակրում այդպիսի ճգնաժամներին, այլ և յանուն ազգի շահերին բողոքում ենք այդպիսի շահամուրթութեանց և մտախառնութեանց դէմ:

**ԹՊԱՆՈՒԹԻՒՆ ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՐԱԳՐՈՅ**

Ս. ԷՄԻՆՈՒՆ

Անցեալ շաբթուս մայիսի 20 կիրակի օրից սկսեալ մինչև միւս կիրակի մայիսի 27 Ս. Էմինունի քանի մը յիշատակութեան արժանի իրողութիւններ տեղի ունեցան, զորս ձեր պատուական լրագրոյ ընթերցողաց հարգողքը արժան համարեցի:

Մայիսի 20ին Նորին Օծութեան Գուհարութեան տարեգործի հանդէսը կատարուեցաւ այնպիսի շքեղութեամբ, ինչպէս կը ցանկար Նորին Վեհափառութիւնը: Ճեմարանի և Հոգ. ուսումնարանի աշակերտներն իրենց դովարանական ճառերով և ուսանաւորներով զարդարում էին այս հանդէսն, որոց վերայ խիստ զգածուում էր Նորին Օծութեան փառիկի սիրտ:

Այս կիրակի, եթէ այս հանդէս տեղի չունենար, Տաճկաստանից եկած հինգ Եպիսկոպոսացուաց ձեռնադրութիւն պիտի կատարուէր, բայց ինչպէս ասում են որ նոյն Վեհափառի փառասիրութիւնն և երկրորդ Հ. Մանկունիի աններկայութիւնն արգելք եղաւ ան՝ դահապարտութեան փառաւոր հանդիսին հետ խառնելու:

Կիրակիսն հանդէսն անցնելից յետոյ, հինգ Եպիսկոպոսացուաց, այն է Զմիւռնիոյ Առաջնորդ Գեր. Մեղիսեղեկ Մուրադեանի, Կարսի Առաջնորդ Գեր. Գրիգորիս Աղաւանտեանի, Արապկերի Առաջնորդ Գեր. Ապահունի, Սեբաստիոյ Առաջնորդ Գեր. Պետրոսի և Կեսարիոյ Առաջնորդ Գեր. Նիդայի մէջ տառնին նիտեր և քրթմնիւններ տեղի ունեցան՝ դա Տաճկաստանի Հայոց սահմանադրութեան հակառակ մի իրողմանագրի վերայ, զոր Վեհ. Հայրապետն Եպիսկոպոսացուաց պարտաւորցուցեր էր: Մեք կը յուսայինք որ սահմանադրութեանը ընարեալ Տաճկաստանի սոց առաջնորդներ և շիրան պաշտպաններ պիտի զգուշանային Վեհափառի այս անձնական կամքը կատարելու, և ասոնց Եպիսկոպոս լինելու պիտի փութային իրենց տեղեր վերադառնալ զոհելով իրենց անձնական պատիւը, բայց ՚ի դուրս:

Մայիս 24 հինգշաբթի Հ. Մանկունիի փառաւոր կառքով մը Ս. Էմինունի մը տուն, և յաջորդ ուրբաթ ատուտ անձ միջպայտ Ն. Արարչութեան Վահրամ Եպիսկոպոսի բարձր ներկայութեան Սեկեզեցում փառաւորապէս Եպիսկոպոսացուներ այն երդմնագիր կարգացին, և ստորագրեցին, որոյ մի օրինակ աստուայի ընդ գրոյս առ ձեռք ուղարկեցին: Ըստ իս երբէք չէր ներկի սոյն Եպիսկոպոսացուաց սեռ այսպէս վարուելը Երեմի անշուշտ թէ սրանք իրենց համար մի խորհուրդ ունին, բայց փափաքելի էր որ փութային իրենց պատիւ և ազգի շահ պաշտպանելու համար ՚ի հրապարակ հանել զայն, զի Ազգ իրենց վերայ մեծ փառասիրութիւն ունին:

Վերջապէս մայիսի 27ին նոցա Եպիսկոպոսական ձեռնադրութեան շքեղ հանդէս կատարուեցաւ, որոյ ՚ի տես եկած էին շատ կողմերէն բազմաթիւ անձինք: Սոցա հետ ՚ի միտին նաև Նորին Օծութեան քաղցր բարեհաճութեամբ Եպիսկոպոս գարձան Ս. Էմինունի միտարաններէն Արթուրեան Արթ. Գևորգ, Տաթևապետ Գրիգոր և Ներսէս վարդապետներ: Բան չունին, թող աշխատին, թող ուսումնական դասնան, թող արժանաւորութիւն ցուցնեն Սորէնի, Կիրակի ու Վահանի պէս վարդապետներ:

Մայիս 28ից սկսեալ ձեռնարանի աշակերտաց հարցընդո՞ւթիւնն է կատարուում. Տաճկաստանի Եպիսկոպոսներ մեծ դուրսեմբ են խոսում աշակերտաց յառաջադիմութեան վերայ և բոլոր արդիւնք տալիս են այս տարվայ վարժապետաց ջանասիրութեան, մտնուանդ Սորէնի Ստեփանէի և պարոն Կ. Կոստանեանցին:

Հայր Մանկունիի Կ. Պօլից վերադառնալիս, չգիտեմ ո՞ր տեղից զնելով Ձերքէզի մի գեղեցիկ ոսկեծող զգեստ և մի արժանապատ դաշոյն բերեց և դարձաւ իւր քեռորի քնքնի պատանին, որ ուսանող է ձեռնարանում, և լուսանկար կանչելով նրան պատկերն ևս հանել տըւաւ իւր ծնողաց խրկելու. վարձատրեց նաև իւր և Նորին Վեհափառութեան սենեկապետ մանկկաթիկ արբուցոյի՝ երկողունց լուսանկարներ ՚ի միտին վեր տանել տալով:

Այսպէս Մանկունիի գիտէ բարեգործութիւններ ևս զործել, բայց և այս գիտնալու է, որ Մանկունի այսպիսի արարքները շատ գէշ տպաւորութիւն են դործում անտոյնների վերայ, և այնու ոչ միայն իւր պատուին է արատ բերում, այլ և համայն կղերական դասուն:

Յուշ:

**Պարտիզակ 23 յուլիս 1879**

... Խմբագիր Էֆէնտի:

Երկար ատենէ ի վեր հետաքրքիր սչօք կը գիտեմ որ Ձեզ պատուական լրագրոյն թանկագին էջերն բընուա չեն պարունակիր այնպիսի բարի լուրեր մեր բազմամարդ Հայաբընակի դիւղին վրայ, որք Պարտիզակը ճանաչողաց և նաև համայն Հայոց ուրախութեան պատճառ պիտի լինէին:

Ձայս նկատելով կուգամ այն թերութիւնը լնուլ, խնդրելով Ձեր Մեծապատուութեանէս որ Ձեր ազգօգուտ լրագրոյն մի էջն ալ Պարտիզակի նուիրէք:

Ինչպէս ամէն Հայաբնակ գիւղերու կամ քաղաքներու, նոյնպէս ալ Պարտիզակի մէջ նոր շարժում մի կայ դէպ ՚ի յառաջադիմութիւն: Իմանի մի ամիս առաջ գիւղիս Թաղախան խորհուրդն, ազգային վարժարանաց համար մի դործունեայ անօրէնի կարևորութիւնը նկատելով, Պօլսոյ յաջողակ դասատուներէն Լուսինեան էֆէնտին հրաւիրեց, որպէս զի իւր համետ ակիմը հետ ազգային երկսեռ վարժարանները կառոււ վարէ:

Հարկ չը կայ ասա երկարօրէն խօսել Լուսինեան էֆէնտիի վրայ, զի նա արդէն իւր պատուական զըրութիւններով գրեթէ բոլոր Հայոց ծանօթ է: Իւր ազնուահի սիկիմն ալ Ագապետան վարժարարի յառաջադէմ աշակերտութիւններէն մին է, և ազջկանց վարժարանին անօրէնութեան պաշտօնն կը վարէ:

Լուսինեան էֆէնտին գիւղս գալուն պէս սկսաւ վարժարանը բարեկարգել: Նոր դասեր աւելցուց և սոցակերտաց խիստ յարմար ուսման ծրագիր մի պատարաստեց, զոր հետ զհետէ ի գործ դնել կը ջանայ: Վարժարանին մէջ եղած հին դուրսութիւնները, որք անձուանի ցրցեցէ զատ ուրիշ բան չէին պարունակիր, դա-

լորովին վերցուց. այս պատճառաւ նաև միայն ֆրաչխանի միջոցաւ դասատուութիւն ընող մի քանի դասատուք հրաժարեցան յօգուտ ազգի ին Եօթն հարիւրի չափ մանկկաթիկ Լուսինեան էֆէնտին, առանց իւր թշնամեաց զբաղարուութեանց կարեւորութիւն տալու, միշտ կը գործէ և յոյս մեծ ունիմք թէ իւր այս յաւատե և անձանձիր աշխատութիւնը օգտակար և յաւալի արդեամբք պիտի պատկուի:

Գիւղիս մէջ շատ ընկերութիւններ կան, որոց ամենուն ալ նպատակն է ազգային դաստիարակութեան օգնել, թէ և տարբեր եղանակներով: Կանայք ալ ընկերութիւն մի ունին Արմէնուլտ անուամբ, և ըստան մի հաստատում լինելով, ամեն կիրակի կը ժողովին և ճառախօսութիւններ մտիկ կընեն: Սոյն ընկերութիւնն ալ իրեն նպատակ ունի սղջկանց վարժարանին օգնել: Միւս ընկերութեանց անուններն են՝ Հայրենասէր, Արամեան և Ասքանաղեան. ուրիշ մանր մանր ընկերութիւններ ալ կան: Հայրենասէր ընկերութիւնը գիւղիս մէջ եղած ուսումնասէր և քիչ շատ նաև ուսումնական երիտասարդներէն կը բաղկանայ, և կրնամք ըսել թէ ընկերութեանց ամենէն արդիւնաւորն եղած է:

Թաղական խորհուրդը՝ վարժարանները վերաշինելու խորհուրդն ունէր, և փոխառաջնորդ Գեր. ըմտեփան վարդապետը քանիցս անգամ հրաւիրեց, որ գիւղս դարձի իւր զամի գործակից լինի: Գեր. Ստեփան վարդապետ մարտ 15ին ՚ի վեր խոտացած է գալու, բայց մինչև յարդ եկած չինելով, վարժարանաց շինութիւնը ետ մնացած է: Թէ և Գեր. Ստեփան վարդապետ այս միջոցիս մէջ պարսպ մնացած չէր և միշտ կը գործէր, բայց կարճեմ թէ կրնար գոնէ 8-10 օր կամ աւելի յօգուտ գիւղիս մանկկաթիկ փասնել:

Կը յուսումք թէ Ստեփան վարդապետ, զգալով որ վարժարանաց վերաշինութեան ետ մնալուն դիտաւոր պատճառներէն մին ալ իրեն իւր խառնումը չկատարելն է, ան յապաղ գիւղս կուգայ և Թաղ խորհրդոյ գործակից կը լինի: Մնամ...

ՀՐԱՆՏ

**ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ**

Անդիական առածը կըսէ թէ «ժամանակը դրամ է», վասն զի եթէ լաւ կերպով գործածուի այն, ոչ թէ միայն դրամ կը վաստակուի, այլ և խել մը բարեքներ յառաջ կը գան: Թերևս այս ճշմարտութեան դիտակցութեամբն է որ մարդիկ շատ հին ժամանակներէ ՚ի վեր խորհած և աշխատած են չափել ժամանակը՝ զայն օգտակար կերպով բաժնելու համար: Պատմութեան մէջ յիշուած առաջին ժամացոյցները ջրով էին, որոյմէ հաս մը Հայոց Տիգրան Բ. թագաւորը նուիրած է Հուսովնայեցոց, և այսպէս առաջին ժամացոյցը Հայ թագաւորի մը շնորհիւ մտած է յերուպա: Յետոյ Արաբացիք աւելի կատարեալ գործեցին ժամացոյցները: Սակայն բոլոր ասոնք բան մը չէին արժեր այսօրուան ժամացոյցներուն քով որոնց մարդիկ հասան Գալիլէոսի և Նիւէնտի գիւտերուն շնորհիւ: Ժամանակ մը կար, յորում ժամացոյցները պերճանք մ'էին և միայն հարուստներու առանձնաշնորհն. իսկ սոյսօր ամենէն համեռտ քսակներու ալ զիւր ամանակէն են շնորհիւ եղած դիտարուն: Այս աւուր ժամացոյց-

ները նշանաւոր են ոչ միայն իրենց գիւրազնութեամբն ու ճշգրտութեամբն, այլ և իրենց հիմնալի գեղեցիկութեամբն:

Կը յուսում թէ ընթերցողք աւելի պիտի զարմանան եթէ իմանան թէ սիկիմնաց գործածած այն փոքրիկ ու սիրուն ժամացոյցները կը շինեն ըզուրիցերի սահմանակից Ֆրանսայի գիւղացիներ: այս ալ աշխատութեան բաժանման սկզբունքին հետեանքն է: Եթէ ժամագործութեան ամեն մանրամասնութեանց մէջ մտնել ուղենք, հատորներ հարկաւոր են, մեք այս տեղ յառաջ պիտի բերենք միայն բոլոր աշխարհի մէջ շինուած ժամացոյցներուն թիւն և անոնց արժէքը:

Ֆրանսա կը շինէ 1,000,000 ժամացոյց, ժամանակագրի և, որք կարճ են 65,000,000 ֆրանք: Չուրիցերի կը շինէ միայն ժամացոյց իւր 1,500,000 որք կարճ են 60,000,000 ֆրանք: Գերմանիա թէ և 2,000,000 ժամացոյց կը տայ տարին, սակայն 25,000,000 ֆրանքէն աւելի չեն արժեր: Ամերիկա 32,000,000 ֆրանքի մեծ ու փոքր ժամացոյց կը շինէ: Մեքիկա 16,000,000 ֆրանքէն և Աստուրիա 10,000,000էն աւելի ժամացոյց չեն տար վաճառականութեան: Վերոյիշեալ թիւերուն նայելով, ամեն տարի 2,500,000 փոքրիկ ժամացոյց և 4,000,000 մեծ ժամացոյց կը շինուին և աշխարհի շորս կողմերը կը տարածուին: Բոլոր աշխարհի ժամագործութեան արդիւնքն է 200,000,000 ֆրանք կամ իւր 8,690,000 ժամանեան լիբա: Նըկատելու արժանի կէտն այն է, որ այս քան արժող ժամացոյցներու նախահանուն նիւթաց արժէքն ոչինչ է գործաւորաց օրականին հետ բաղդատմամբ: Այս կերպով է որ ժողովուրդ մը անբերրի երկրի մը վրայ խոկ կը հարստանայ՝ նախահանուն նիւթաց արժէքը իւր աշխատութեամբն ու հանձարովը բազմապատկելով և այլոց վաճառելով:

... Խմբագիր Մատիս պատուական լրագրոյ:

Թաղական խորհուրդս կը խնդրէ Ձեր Մեծապատուութեանէս որ բարեհաճիք հետեւեալ սղջը Ձեր պատուական լրագրոյն մէջ հրատարակել, որոյ համար կանխաւ մեր խորին շնորհակալութիւնն յայտնելով:

Մնամ՝ յարգանքով  
79 յուլիս 30 ի Դիմոյ  
Գաաղքէզ թաղ խորհրդոյ  
Ատենագպիր Ատենագպիր  
Կ. Տ. Հարգեալ Սերգէ կիւսնիկեան

**Ե. Չ. Դ.**

Յուսմիկայ օգոստոս ամսոյս 12 կիրակի օր Ս. Աստուածածնայ վերափոխման Տօնն և գիւղիս Ս. Թաղաւոր եկեղեցւոյ տօնախմբութիւնն ըլլալով, հարկ կը համարվիք ազգաբարեւոր մայրաքաղաքիս հետաւոր թագերին ուխտաւորութեան անուամբ շաբաթ օրու ընէ չգան, որք սովորութիւնն ըրած են գիշերներն եկեղեցին անցնել ուսել խմել և:

Արդէն եկեղեցւոյս մէջ ընկողմաներու տեղի և սենեակներ չկան, և եթէ սոյն միջոցն իսկ կարելի լինէր, լաւ գիտեմք թէ ասի մի սովորութիւն է անյարմար և անպիտան որ չը բերէր պատիւ մեր ազգին և թէ կրնայ ծաղու և ծանախի առիթ մի լինել ի մէջ և մանաւանդ յօտարաց: Բարեպաշտ և ճշմարիտ ուխտաւորաց համար ամեն դիւրութիւն կայ կիրակի օր շորհնաւով գալ և վերադառնալու:



Ի Լ Ա Ն

Ներգամայե էրդար անարըը էլուն շուրուիը մուգարըըրէսի մէ ինթի- խապ օլունուղ ճարը Շուրատա մահ- ֆուղ պուրունան մէհուր նու մանէ- սի մէհէ իմէ պիը մէնէլիը օլարուը շէհրի էլիը պին գըլէտէն ալթմըլ պին գըլէտէն գատար միւպոյէա օ- լունանաը օլան Սիպիը եպըրնըն պէ- հէր գըլէտի օն իւչ զրուչ ալթը փա- րայա թալիպի էօհմէսինտէ օլուպ աղոսթօար բու մինին սէրիլիննի չէ- հարչնիպի կիւնիւ միւնաքասար ին- րա օլունանաղընտան, իթայէ թալիպ օլանիարըն եէլիմի մէգըիւրտէ ճարը Շուրայի առքէրիէ կէլմէլէրի մէ շէ- րայիթը մուքալիէլի անիամաը իւ- թէլիէլիէլին տաշա էլիէլէ Շուրայի մէգըիւրէ միւրանաթ իթմէլէրի ի- րան օլունուը :

2 աղօսթսօ 1879  
Պապը Սէրասըէրի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴՆ

Խօսեցաւ  
Հրանտ Ասարուր  
Ազգային Հիւանդանոցի օրարտիկն մէջ  
27 մայիս 1879

Կը ծախուի ամեն Հայ դրամաճա- ւի քով և իւրա, թիւնէլի դիմաըը Պ. Պօտէն Գրանսայուցն զրատունը, 2 թ զին 2 1/2 զըշ արծաթ

ԳԻՒՄԱՐԱԿԱՐ ԲԱՌԻՐ

Թարգմանեաց Ս. Գուհանեան  
Իօթէն-Սիւի սոյն հետաըըըրաչարթ մէպին երկրորդ այն է վերջին հա- տորն ալ իզմիլիէն հասած ըլլալով, կը ծախուի եէնի ճամբ Չիլիկիլիէր ճատէսի թիւ 1 Ս. Գուհանեան գը- րատունը . գին 2 ֆրանք :

ԲՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆ

Հայաստանեաց Ս. Եկեղեցուց  
Գրեց Գարեգին Վ. Սրբանձաեանց  
Երեւոր րեւ  
Սոյն մատենիկը 19 գեղեցիկ պատ- կիւրներով 144 երևսէ կը բաղկանայ և կը ծախուի եէնի ճամբ Չիլիկիլիէր ճատէսի թիւ 2, Ս. Գուհանեան գը- րատունը և ուրիշ գրալիմանայ քով գին 60 փարա արծաթ :



ՍՈՒԹԻՆԿ ԾԻՐՈՒՅ

Յոյանի է որ երախայը ծնանելէն մինչ երեք տարեկան հասակը գը- թէ շարունակ փորի ցաւ . փորհարու- թիւն, ստամոքսի անհանգստութիւն, անքուն մնալ, ջրային գըգռութիւն և այլն կուներան, մանաւանդ ախու հանելու միջոցին, և այս ներգութիւն- ներն ալ աւելի կը ստատկանան ամառ- ւան տաք եղանակին : Սուլիկ ճի- րօքը վերայիշեալ գժտարութեանց ա- մենուն ալ առաջըը կուանէ ու կը բը- ժըլիէ, որով երախան կը հանգչի ու կը զօրանայ յուրախութիւն մեծ իւր ծնողաց : Գործածողները շատ գոհ- են : Ուղղը կրնայ փորձել . գինն ա- ժան է . նորածին երախայից կաթի- լով կը տրուի, վեց ամիսէն վեր եղը- զին օրը երեք անուշի գըգալ . կը ծախուի Կ. Պօլիս Գալաթիա Միւսս- եան և ընկերաց Սմերիկայի մաղազան :

ԵՐԻՐԱԳԻՐ—ՏՆՈՐԷՆ  
Կ. Ս. ԻԹԻՒԻՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ  
ՂՍԱԿԱՍ ԿՕՐՈ ԻՍՆ

ՇԻՐՔԵԹԻ ԻՍՍՅՐԻԷԻ  
ՇՈՂԵՆԱԿՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՆԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1879 ՕԳՈՍՏՈՍ 4 ՁՈՐԵԲՇԱՐԹԻ ՍՐԷՆ ՄԿՍԵԱԼ  
ՄԵՆՁԵՆ ՕԳՈՍՏՈՍ 31  
ԲՈՒԹՈՐԷՆ ԻԶՆՈՂ ՇՈՂԵՆԱԿՆԵՐԸ

Table with 3 columns: Ժամ, Ե-բ-դ-է-ն է-շ-բ-բ, Թի- (Dates, names, and amounts)

ԱՐԷՆԻՄ ԳԵԷԷ

Table with 3 columns: Ժամ, Ե-բ-դ-է-ն է-շ-բ-բ, Թի- (Dates, names, and amounts)

ԱՆԷՆԻՄ ԵՂԵԲ

Table with 3 columns: Ժամ, Ե-բ-դ-է-ն է-շ-բ-բ, Թի- (Dates, names, and amounts)

Table with 3 columns: Ժամ, Ե-բ-դ-է-ն է-շ-բ-բ, Թի- (Dates, names, and amounts)

ԿԱՄՈՒՐՁԷՆ ԵՆՆՈՂ ՇՈՂԵՆԱԿՆԵՐԸ

Table with 3 columns: Ժամ, Ե-բ-դ-է-ն է-շ-բ-բ, Թի- (Dates, names, and amounts)

ԱՐԷՆԻՄ ԳԵԷ

Table with 3 columns: Ժամ, Ե-բ-դ-է-ն է-շ-բ-բ, Թի- (Dates, names, and amounts)

ԱՆԷՆԻՄ ԵՂԵԲ

Table with 3 columns: Ժամ, Ե-բ-դ-է-ն է-շ-բ-բ, Թի- (Dates, names, and amounts)

ԻՆՍԿԻՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈՂԵՆԱԿՆԵՐԸ

Table with 4 columns: Ժամ, Ե-բ-դ-է-ն է-շ-բ-բ, Կ-մ-բ-ը, Կ-մ-բ-ը (Dates, names, and amounts)

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Table with 4 columns: Ժամ, Ե-բ-դ-է-ն է-շ-բ-բ, Կ-մ-բ-ը, Կ-մ-բ-ը (Dates, names, and amounts)